ՎԵՊԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՆԱԻՐԱ ՏՈՂԱՆՅԱՆ (Հայաստան)
մ. գ. թ., դոցենտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Բանալի բառեր – ընթերցանությունը եւ անձի ձեւավորումը, վեպ, վեպի ընթերցումը եւ գրականության դասը, վեպի ուսուցման կազմակերպումը, ինքնուրույն ընկալում, երկխոսություն:

Key words: reading and personality formation, novel, novel reading and literature lesson, organization of novel teaching, self-perception, dialogue.

Ոչ մի նոր բան ասած չենք լինի, եթե մեկ անգամ եւս արձանագրենք, որ անձի ձեւավորման կարեւոր գործոններից մեկը ընթերցանությունն է: Համակողմանի զարգացած մարդ կոչվելու կարեւոր ցուցանիշներից են վերջինիս կարդացած գրքերը, դրանց քանակն ու բազմազանությունը: Գիրքը կամ գրականությունը մարդու հոգեւոր աշխարհը կառուցելու, ձեւավորելու, նրա վրա ներազդելու բացառիկ հնարավորություններ ունեն:

Ընթերցանությունը մարդու հոգեւոր եւ հոգեբանական կարեւոր հակումներից մեկն է: Բախտինը ընթերցանությունը համարում էր խոսակցություն ստեղծագործության հետ[1], մի հատկանիշ, որը, մեր կարծիքով, գերազանցապես պետք է ձեւավորվի հանրակրթական դպրոցում: Ընթերցանությունը, որպես մարդու բացառիկ կարողություն, ամենաարդյունավետը ձեւավորվում է մանկական հասակում. բավական է այստեղ ուշանալ, չզբաղվել լուրջ ընթերցանությամբ, ապա անխուսափելիորեն առաջ է գալիս անտարբերություն դեպի գեղարվեստական խոսքը, ինչպես նաեւ՝ գեղագիտական ճաշակի եւ պատկերային մտածողության բացակայությունը: Կրտսեր եւ միջին դպրոցում նման իրավիճակի դեպքում ավագ դպրոցում (հայ գրականության հա-

[1] **Бахтин М.**, Вопросы литературы и эстетики, М., 1975, с. 18.

մակարգված դասընթացի պայմաններում) ամենաընդունակ ուսուցիչն անգամ ոչինչ անել չի կարող: Հետեւաբար, շատ կարեւոր է օգտագործել աշակերտի տարիքային առանձնահատկությունները, կարեւորել դպրոցի բոլոր աստիճաններում գրականության դասի նպատակներն ու խնդիրները: Անփոփոխ պետք է դիտարկել հետեւյալ մոտեցումը. սովորել գրականություն, նշանակում է նախեւառաջ սովորել ընթերցել:

Ժամանակակից դպրոցում, ի թիվս այլ խնդիրների, առանձնանում է արձակ ծավալուն ստեղծագործությունների ուսուցման հարցը: Գրականության ուսուցման գործընթացում առանձնահատուկ տեղ է գրավում վեպերի ուսուցումը: Վերջիններս ընդգրկված են ավագ դպրոցի հայ գրականության համակարգված դասընթացում եւ ծրագրային նյութի գերակշիռ մասն են կազմում: Սովորաբար մեծածավալ ստեղծագործությունները ընթերցվում են տանը, նախապես, մինչեւ դասարանում ուսուցման կազմակերպումը: Կա մի պարզ ճշմարտություն. գրական ստեղծագործությունները գրվում են, որպեսզի ընթերցվեն: Եթե երկը չի ընթերցվել, ապա գրականության դասը չի կարող կայանալ: Սակայն այսօր, հատկապես ավագ դպրոցում, հաճախ հանդիպող իրավիճակ է՝ «գրականության դաս» կամ «սովորել գրականություն» առանց բնագիրը կարդալու. դա մեծ մասամբ վերաբերում է վեպերի ընթերցանության պրակտիկային: Իրավիճակի նման պատկերին նպաստում է նաեւ այն, որ դասագրքերում գրականագիտական վերլուծության են ենթարկված հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված բոլոր երկերը, եւ աշակերտին մնում է լավագույն դեպքում դրանք անգիր վերարտադրելը: Այդ պարագայում բնագրի ընթերցանությունը, ցավոք, շատ հաճախ պարտադիր պահանջ չի դառնում: Եթե այս իրավիճակը սկսում է բավարարել ինչպես աշակերտին եւ ուսուցչին, այնպես էլ ծնողին, ապա արդյունքում երիտասարդը կյանք է մտնում ամբողջովին անհաղորդ կամ, լավագույն դեպքում, կիսով չափ ծանոթ գրական դասական բարձրարժեք ստեղծագործություններին: Եվ որ ամենակարեւորն է՝ նա չի ունենում նաեւ ընթերցանության տարրական հմտություններ:

Ժամանակակից մանկավարժության եւ հոգեբանության մեջ կարդալու, ընթերցելու կարողությունը ստորաբաժանվում է մի քանի փոխկապակցված աստիճանների: Առաջին ամենատարրական աստիճանն այն

է, երբ մարդը տառաճանաչ է դառնում, սովորում է տառերը, վանկերը, ապա դրանք միավորում, կազմում բառեր, նախադասություններ, միտք եւ այլն: Երկրորդ աստիճանը այն է, երբ մարդը սկսում է կարդալ բարձրաձայն, ապա՝ մտքում (լուռ ընթերցանություն), յաջորդ աստիճանը արդեն կարդացածի վերարտադրումն է, իսկ ամենաբարձր աստիճանը կարդացածի վերաբերյալ ինքնուրույն դատողություններն են, քննադատական վերաբերմունքն է, վերլուծելու, մեկնաբանելու, տեսակետ հայտնելու, բանավիճելու կարողությունը: Այս ամենի հետ շատ համահունչ են վեպի ուսուցման մեթոդիկայի ավանդական ուղիները: Գրականության դասավանդման մեթոդիկայում ավանդաբար ընդունված են եղել (այսօր էլ դրանք մնում են արդիական) գրական ստեղծագործության ուսումնասիրության, ուսուցման կազմակերպման երեք հիմնական ուղիներ՝

1. Հեղինակի հետքերով կամ այսպես կոչված երկի ամբողջական վերլուծությունը: Սրա հիմքում ընկած է ստեղծագործության սյուժեի ընկալումը եւ վերլուծությունը:

2. Կերպարային համակարգի վերլուծությունը: Այս ուղին ենթադրում է երկի կերպարային համակարգի վերհանում, կերպարների վերլուծության միջոցով երկի բովանդակության ընկալում եւ ուսումնասիրություն: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ ստեղծագործության գեղարվեստական-կերպարային համակարգը բավականին բարդ կառույց է, եւ գրաքննադատությունն ու գրականագիտական հետազոտությունները կոչված են եւ կարող են օգնել ինչպես ուսուցչին, այնպես էլ ընթերցող-աշակերտին ավելի արդյունավետ ընկալել երկը:

3. Պրոբլեմային (հարցադրումային) վերլուծությունը: Այս ուղին հնարավորություն է տալիս աշակերտին ձեւավորել սեփական կարծիքը, պաշտպանել իր տեսակետը[2]:

Նշվածներից զատ՝ այսօր շատ կարեւորվում է գրականության ընկալումը երկխոսության միջոցով:

Քննարկենք ընթերցանության՝ որպես սոցիալական երեւույթի մի շարք կարեւոր գործառույթներ:

Անհատական մակարդակում ընթերցանությունը նպաստում է մտավոր եւ զգայական առումով լիարժեք զարգացած անհատի ձեւա-

[2] **Лавлинский С.**, Технология литературного образования, М., 2003, с. 75.

վորմանը, այնպիսի անհատի, որն ունակ է ինքնազարգացման եւ ինքնիրացման: Ընթերցանությունը հնարավորություն է ընձեռում ճանաչելու ազգային ու համամարդկային հոգեւոր ու կենսական արժեքները. գրականության մեջ է, որ յուրահատուկ ձեւով խտացված ու արտացոլված են ազգի պատմությունը, հոգեբանությունը, երազանքներն ու իղձերը: Ընթերցանությունը նպաստում է նաեւ մարդու սոցիալական կարողությունների զարգացմանը: Այս ամենի ամբողջությունն ու առկայությունը հնարավորություն են տալիս մարդուն որակելու որպես կարդացած մարդ: Ինչո՞վ է առանձնանում կարդացած մարդը. *նա*՝

ա) կարողանում է մտածել ավելի ծավալուն խնդիրների շուրջ, առավել համարժեք գնահատել իրավիճակը, գտնել համապատասխան լուծումներ տարբեր իրավիճակներում,

բ) օժտված է ավելի վառ հիշողությամբ, երեւակայությամբ, ստեղծագործական ձիրքով, գեղագիտական ճաշակով,

գ) խոսքն ավելի արտահայտիչ է, միտքը՝ հստակ, բառապաշարը՝ հարուստ,

դ) ավելի ճշգրիտ է ձեւակերպում մտքերը՝ ինչպես բանավոր, այնպես էլ՝ գրավոր,

ե) ավելի արդյունավետ է հաղորդակցվում, փոխադարձ շփումներում ազատ եւ անկաշկանդ է,

զ) առավել անկախ եւ ազատ է իր դատողություններում եւ վարքագծում:

Կարդացած մարդու պարագայում կարեւոր է արդեն ոչ թե պարզապես գիտելիքը, կրթությունը (վկայականը), այլ ինտելեկտը, ոչ թե պարզ տեսքով գիտելիքը, այլ մտածողության հարաճուն կառույցը, այն սխեման, որով մտածում է, որն էլ այսօր շատ ավելի կարեւոր ու արժեքավոր է: Մեզ համար վաղուց արդեն նորություն չէ, որ լավագույն ատեստատը կամ դիպլոմը դեռեւս չեն վկայում անձի իրական գիտելիքների ու կարողությունների մասին:

Գյոթեն, օրինակ, ընթերցանությունը համարում էր ամենաբարդ գործերից մեկը. «Մարդիկ հաճախ չեն էլ պատկերացնում, թե ինչ դժվարին գործ է ընթերցել սովորելը: Ես ինքս դրա համար ծախսել եմ 80 տարի եւ առ այսօր չեմ կարող ասել, թե հասել եմ նպատակին»[3]:

[3] **Эккерман И.**, Разговоры с Гете в последние годы его жизни, М., “Художественная литература”, 1986, с. 578.

Ավագ դպրոցականին բերելով դեպի վեպի զարմանահրաշ աշխարհը՝ կամրապնդենք նրա՝ կարդալու, գրելու, խոսելու, լսելու, ընկալելու, մտածելու կարողությունները, կապահովենք եւ հուզական հոգեվիճակ, եւ մտքի կենտրոնացում:

Մեծ ծավալի արձակ ստեղծագործություններն այնպիսի մի կուռ համակարգ են, որի բոլոր մասերը փոխկապակցված են եւ ներկայացնում են հեղինակի աշխարհընկալման յուրահատկությունները, իրականության արժեւորման ձեւերն ու մեթոդները[4]: Հեղինակներն ստեղծում ու ներկայացնում են իրենց պատկերացրած ու երեւակայած աշխարհն ու կյանքի մոդելը: Ընթերցող-աշակերտը, ընկղմվելով ստեղծագործության մեջ, ոչ միայն տեսնում, ընկալում է հեղինակի ստեղծած աշխարհը, այլեւ դառնում է որոշակի առումով մասնակից, համահեղինակ, ապրումակցող: Արձանագրենք, որ ավագ դպրոցում վեպի ուսուցման հիմնական քայլերն են՝ ընթերցումը, վերլուծությունը, երկխոսության, փոխհաղորդակցության մթնոլորտի ձեւավորումը: Վերջինս չափազանց կարեւոր է. երկխոսության մթնոլորտը գրականության դասերին նշանակում է՝ երկխոսություն ուսուցչի եւ աշակերտների միջեւ, երկխոսություն աշակետների միջեւ, երկխոսություն աշակերտների եւ հեղինակի միջեւ, երկխոսություն աշակերտների եւ երկի հերոսների միջեւ:

Արդյունավետ են այն դասերը, երբ երկխոսությունը փոխարինում է ուսուցչի բացատրությանը, նրա կողմից երկի բովանդակության պարզ ներկայացմանը, երբ ուսուցիչը ոչ թե պատմում է երկի սյուժեն, այլ նպաստում է դրա շուրջ երկխոսության կայացմանը: Ուսուցչի խնդիրն է գտնել երկի վերլուծության այնպիսի մեթոդներ, որոնք առավելագույնս մոտ լինեն տվյալ հեղինակի գեղարվեստական մտածողությանը: Այդուամենայնիվ, նաեւ նկատի ունենալ, որ գրական երկի դպրոցական վերլուծությունը, ի տարբերություն գրականագիտականի, ավելի մեծ չափով կարող է ենթակայական լինել: Յուրաքանչյուր սովորող պետք է հնարավորության ունենա ներկայացնելու, քննարկելու կարդացած երկի վերաբերյալ *իր* տպավորությունները, կարծիքը, դատողությունները, մտքերը: Դառնալով երկխոսության մասնակից կողմերից մեկը՝ ուսուցիչը նույնպես ներկայացնում է իր ընկալումը,

[4] **Сомова Л.**, Методика обучения литературы, М., 2014, с. 50.

կարծիքը, մտքերը, սակայն կարեւոր է, որ դրանք հնչեն որպես անհատական կարծիք, լինեն համոզիչ, ունենան հիմնավոր փաստարկներ, սակայն չպարտադրվեն որպես վերջնական ճշմարտություններ: Գրականության դասի նպատակը չպետք է լինի ընդհանուր, միասնական եւ վերջնական լուծումներ ու պատասխաններ ստանալը: Գրականության դասի նպատակը պետք է լինի աշակերտին դեպի գիրքը մղելը, իր կարդացածի ընկալումը, սեփական բացահայտումների, եզրահանգումների ու դատողութիւնների խորացումը:

Եթե միջին դպրոցում մեզ հաջողվում է աշակերտի մեջ զարգացնել ընթերցելու ցանկություն, կարողություններ եւ հմտություններ, իսկ ավագ դպրոցում այդ ամենը հաջողությամբ ամրապնդում ենք եւ ավելացնում նաեւ գրքի խստապահանջ ընտրության կարողություն, ապա վստահաբար կարող ենք ասել, որ լայն հեռանկարներ ենք բացում գրականության արդյունավետ ուսուցման գործում եւ ապահովում հետագայում ընթերցասիրության շարունակականությունը:

Ահա թե ինչու, մեր առջեւ դրված է շատ ավելի ծրագրային, մեթոդաբանական խնդիր՝ դասագրքերը վերափոխելու եւ ազատագրելու դրանք պարտադիր վերլուծական կաղապարներից:

SUMMARY

APPROPRIATION OF NOVEL IN EDUCATION SYSTEM: OBSCALES AND OVERCOMING WAYS

Naira Toghanyan

The ability of reading is the most important task of a human learner. There can be no literature class without reading a literary work (especially voluminous works). Bringing the high school student to the wonderful world of the novel, we will strengthen his/her ability of reading, writing, speaking, listening, perceiving, thinking, we will provide both “emotional state of mind” and “concentration of thought”. The main steps in teaching a novel in high school are reading, analysis, creating an atmosphere of dialogue, communication.